ÉVALUATION DIAGNOSTIQUE
DES ÉLÈVES ALLOPHONES

Compréhension de l'écrit

CYCLE 4 FIN DE 3E

Langue d'origine : arménien

CANOPÉ

Ազգանուն՝ | Անուն՝

NIVEAU : FIN DE 3e

Կարդացեք հետևյալ տեքստը.

Աշխարհի լավագույն գեղեցիկ գիշերն էր, լուսինը մայր էր մտնում և աստղերը փայլում էին ավելի վառ պարզությամբ մուգ կապույտ երկնքում: Քամու ոչ մի շունչ չէր շարժում ծառերը, օդը գաղջ էր և բալասանով լեցուն:

Նա հենված էր արմունկին, աչքերը՝ երկնքին, ես թեքվել էի նրա կողքին և նայում էի նրան երազելուց:

Շուտով ես ինքս էլ բարձրացնում էի աչքերս, մի թախծոտ հեշտասիրություն մեր երկուսին արբեցնում էր: Միասին շնչում էինք գաղջ շունչը, որ գալիս էր ծառուղու կողմից*, հեռվում տարածության մեջ մենք հետևում էինք գունատ սպիտակության վերջին շողերը, որ Լուսինն իր հետ տանում էր՝ իջնելով շագանակենիների սև զանգվածի հետևից: Ես հիշում եմ, որ մի օր ես հուսալքված նայում էի այս կապույտ երկնքի հսկայական դատարկությանը, այս հիշողությունից ես դողացի, այժմ ամեն ինչ ա՛յնքան լեցուն էր […]

Ձեռքով գրկում էի անգին սիրուհուս գոտկատեղը, նա մեղմ շրջեց գլուխը, աչքերը լցված էին արցունքներով: Նրա մարմինը ծալվեց ինչպես եղեգը, շրթունքները կիսաբաց փարվեցին շրթունքներիս, և տիեզերքը մոռացության մատնվեց:

*ծառապատ անցուղի : հավասարաչափ կտրված ծառեր, որոնք կազմում են ծառուղի, ցանկապատ:

Ալֆրեդ դը Մյուսե, «Դարիս զավակի խոստովանությունը», 1836թ:

Շրջանակի մեջ վերցնել ճիշտ պատասխանը կամ պատասխանները՝

1

Քանո՞ի հերոս կա այս տեքստում

• 1 • 2 • 3

MI MF MS TBM

2

Ե՞րբ եվ ո՞րտեղ է ընթանում պատմությունը։

• Բնակարանում • Դրսում

• Օրվա ծեգին • Գիշերվա ընկնելու ժամանակ

MI MF MS TBM

3

Այս հատվածը ճշգրիտ պատմում է հետևյալի մասին՝

• Ընկերական հանդիպում • Նոր հանդիպում • Երազ

• Սիրահարված հանդիպում • Բաժանում

MI MF MS TBM

4

Արդյո՞ք միջավայրը՝

- անհանգստացնող է
- ռոմանտիկ է
- չարաբաստիկ է
- խաղաղ է
- չգիտեմ

MI MF MS TBM

5

Դասավորել բաղադրիչները ժամանակագրական կարգով՝ համարակալելով դրանք 1 ից մինչև 4-ը:

..... Հերոսները համբուրվում են

..... Հերոսները նայում են բնության տեսարանը.

..... Երիտասարդ կինը լացում է

..... Պատմողը մտածում է ցավոտ դրվագի մասին

MI MF MS TBM

6

Զախակողմյան բառի դիմաց՝ աջ մասում, գիծ քաշել:

Օծված •	• Հայրենաբաղձ
	• Օծանելիքով բուրված
Հեշտասիրություն •	• Հաճույք
	• Անհոտ
Թախծոտ •	• Զզվանք
	• Ուրախ

MI MF MS TBM

7

Ինչու՞ է, ըստ Ձեզ, երիտասարդ կինը լաց լինում: (Շրջանակի մեջ վերցնել ճիշտ պատասխանը կամ պատասխանները՝ սեղմելով տեքստի վրա):

• Նա ափսոսում է, որ թույլ է տվել գայթակղվել պատմողի կողմից:

• Նա վախեցած է:

• Նա երջանիկ է:

• Նա հիվանդ է:

MI MF MS TBM

8

Ինչպիսի՞ն են սիրո ազդեցությունները պատմողի վրա (Շրջանակի մեջ վերցնել ճիշտ պատասխանը)

Սերը թույլ է տալիս նրան մոռանալ մնացած աշխարհի մասին:	• ՃԻՇՏ	• ՍԽԱԼ	• ՉԳԻՏԵՄ
Դժբախտացնում է	• ՃԻՇՏ	• ՍԽԱԼ	• ՉԳԻՏԵՄ
Փոխում է աշխարհընկալումը	• ՃԻՇՏ	• ՍԽԱԼ	• ՉԳԻՏԵՄ
Իմաստ է տալիս իր գոյությանը	• ՃԻՇՏ	• ՍԽԱԼ	• ՉԳԻՏԵՄ

MI MF MS TBM

Rappel des codes de correction :
MI = maîtrise insuffisante **MF** = maîtrise fragile **MS** = maîtrise satisfaisante **TBM** = très bonne maîtrise
MI et MF : non acquis **MS et TBM :** on considère que c'est acquis